



23 (178). ԱՂՎԸՍՈՒ ՈՒ ԳԻՒՈՒ ՀԵՔԻԱԹ

ժամանակով աղջիկ մե կէղնի, գիկան գուզին ըդոր կը տանին հարս: Զուն-ձմեռ կէղնի, հարսնածնեք-հարսընխուրնեք՝ չըմեն սարխոշ՝ փշտոնք կը կրակին, ձի խառ կիտան, ջրինդ կը խաղան, բեֆ ուրախութեն կէնին, հարս լե, օսկու-արծըթի մեջ կորուկ, ուլ դուզս ու զարդարանքով վըր ձիուն չետեանց յուշիկ-չուշիկ գիկա, կը խընդանա մըջ ուր մտքին, օր հարս կէրթա, թաժա տուն-տեղ կէղնի:

Յանկսկըծի, ո՛ր դինա չուստեն, սատանի պես բորոշիկ աղվես մե զհարսի ճամպեն կը կտրե, կը թռնա նստի վըր թամբի խառբուդին, կը պուպղի, օյին-ղօյին կէղնի, հարսին կըսե:

— Հը՛, սուտ չխոսկա՛ն, չորին ես իմ ակընջով չը լսի՞, օր փոքնդտացիր ու քու չետեան պիզ մե փախավ: Սեերե՛ս, ի՞մալ իս հարսնածնեքուն ու հարսընխուրնեքուն ըսիմ, զքըզի խայտառակ էնիմ: Ի՞նչ կիտաս ընձի, օր չըսիմ:

— Յամա՛ն, ա՛ղա աղվես, քու բախտն իմ չընկի, քու չոտնեքու հողն իմ, հմալ բան մ՛ըսի, խայտառակ կէղնիմ մըջ ախշըրքին: Ա՛ռ իզա չըմեն օսկին, արծաթ, իմ զուզս ու զարդարանք, մինակ հմալ բան մըսի:

Հարս կը հանե ուր օսկին ու արծաթ, ուր զուզս ու զարդարանք կիտա աղվըսուն, ինքն չառեջ կէրթա:

Ընի թըղ էրթա, մենք դառնանք աղվըսուն: Աղվես, դու աղվես. պար կը պարե, տոճիկ կը թալե, զպոչ կը խաղցու, զար ու զարդարանք առած՝ գիկա մըտ գիլուն, թեխաղ կը քաշե, կը կանի, կըսե:

— Գե՛լ, ախշարհ գինա, օր մենք դուշման ինք, թըղ հմալ չէղնի, հմա իմ սիրտ շատ կակուղ է, կը ցավա վըր քըղի, չէ՞ դու լե կնիկ-ճժկնեքու տեր իս:

— Օդո՛րդ է,— կըսե դեւ,— հմա՛...
 — Զի՛մ զուգս ու զարդարանք կիշկի՛ս։
 — Հա՛, կիշկի՛մ ու կը զարմանամ, ըդի յուսան՞ն քըդի։
 — Թաո՛ւ, Թաո՛ւ, աղվըսուն լե կըսին՝ յուստենու, Թե քըդի ըսի՛մ
 կարճամիտ իս, վըբս կը նեդենաս։
 — Ի՛մալ։
 — Ըսո՛ւ, օր կարճամիտ շէդնեը՝ հմլա անոթի ու զղզղուկ կը
 մնե՛ր։
 — Ո՞ն տվեց, զէ՛դ ըսե,— կը հարցու դեւ, ու պշղլած կիշկե
 արմանք-զարմանք աղվըսուն։
 — Գեաի ջուր տվեց՝ Լսե՛, քըդի խոտ էնի՛մ։ Կը տեսնաս ցուրտ
 ձմեռ է, դեստ պաղի, էդի քար։ Զա՛նըմ, ըսի օր մե, չորի՛ն մնաո՛ւ
 հմլա խեղճ ու կրակ, յեւնամ դիմ դլիու ճար տեսնի՛մ, էըթամ ղդեաի
 սյաղ ծակի՛մ, պոշսի յընցում էդ ծկեն, թըղ ինչ խդեր օսկի, արծաթ,
 պուղս-զարդարանք կա՛ շարվին վըր իմ պոշին, ղպոշսի քաշի՛մ
 հանի՛մ դուս, տանի՛մ զէդ հարստութեն ուտի՛մ, խմի՛մ, քեֆ էնի՛մ
 իմ ձղեր լե տոճիկ իդան։
 — Գտցի՛ր,— կը հարցու դեւ։
 — Տո, յա՛, քո՛ո իս, դարշելի դուշ, շըս տեսնա՛ իմ յոտ ու
 դուխ։ Գացի, ղդեսի պաղ ծակի, պոշսի յընցուցի ի ծակ, հասավ
 ջրին, քանի՛մ սհաթ բաքլա էրի, պոշսի ծանդրցավ, օր ծանդրցավ՝
 ըսի՛ կախվա՛ն, քաշի, հանի դուս։ Աչքդ ի բարին, ա՛ղա աղվես,
 ինչ տեսնա՛ վըր պոշին օսկի ու արծաթ, դուգս ու զարդարանք է
 շարվի, անջախ հանի դուս։ Ըհր՛, մեկ լե իշկե, օր ավտընաս։
 Գեւ կիշկեը ու ա՛խ կը քաշեր։
 — Կը լսի՛ս։
 — Ըպա իմա՛լ, խո՛րբան։
 — Օր հանի դուս՝ ընծի-ընծի ըսի։ «Զա՛նըմ, մըջ ախշըրքին
 ախպերութեն ու չընկերութեն կա, շէ՛ դու լե՛ օր մե շէ օր մե՛ հավճա
 կէղնիս դիլուն, Արի՛, ըսի ընծի, ղդուշմընութեն մոռցի, գնա դիլուն
 ըսե թըղ էրթա է՛ն լե հանե, մե՛ղք է, կնկա-ճժկընեըու տեր է, գեղ
 շը կոնա էրթա, քաղաք շը կոնա մտնա՞։ Վա՛տ իմ էրի, ախպեր,
 ըսե սա՛նք։
 — Օղորմի քու ծնողաց, շնոխկալ իմ քըզնե։ Մկա հասկըցա,
 օր իմ ախպերն ու յընկերն իս։ Զըսի՛ս էրթամ։
 — Գնա՛։
 Գեւ կէրթա, իմալ օր աղվես ըսեր էր, հմալ կէնե՛ ծկուց ղպոշ
 կը մտու, կը հասու ջրին, կը պպղի, բաքլա կէնե։ Ցուրտ կը ճկճկա,

գել կը վկայվա: Խեղ մը գընցնա, կը տեսնա, օր քանի կէրթա՝ պ: հմալ կը քամվի, օր գիւտու աչքեր կը թոնան ճակատ:

— Վո՛ւա աղվես դիտի խաբեց,— կըսե ուրին-ուրին:

Գել գուղե զպոչ քաշե հանե, հմա պոչ կպի, չը սրծնա: Ի՛մալ կէղնի, ի՛մալ շէղնի, կը տեսնա՝ քանի կէրթա յեվելի կը սըխմըվի, ղոռ կիտա, ուժով կը քաշե, օր կը քաշե, մեկ լե ի՞նչ, պոչն շուրի բոք կը կըտրի, կը մընա մըջ պաղին: Արուն կը շոա ուրնե, յարեն կը մոմոա, փոր կը գոգոա, վկայվալեն կը վաղե, կէրթա ղաղվես կը գտնա:

— Էդ ի՞նչ օղյաթ բերիր իմ գլուխ, հը՛:

— Ի՞նչ է էդի, գել ախպեր:

— Չոռ ու ցավ քու պինչն է էդի, իշկե՛:

Աղվես կիշկե՛ գիւտ պոչ քոքեն չկա:

— Է՛,— կըսե աղվես,— օր կըսիմ կարճամիտ իս՝ կարճամիտ իս, մինակ շուն ու օխշար կոնաս ուտիս, ըպա՛: Բաքլա շոս է՛րբրի, շա՛տ իս վոաղի, ղպոչդի ղայ իս էրի: Օր քիչ մը լե բաքլա էնեթ՝ լըմեն բան ուր կարգով ու սարքով կէղնեթ: Ի՛մալ լե արուն կը շոա, վա՛խ, վա՛խ, վա՛խ, վա՛խ, քոռնեթ իմ էրկու աչքեր, օր իմ ախպոր էգ հալին չը տեսնենք: Ի՞նչ ըսիմ էդ խային գետին, ձուն-ձմըռնոցով բան չը հասկընա, չը լսե, գուր էրած կէնե: Հմա, գե՛լ ախպեր, մուժդեն վրեդ, մկա յեվելի թեթև կոնաս քելիս, չըմքի պոչն ըսա՞ յեվելորդ ծանդրութեն է, հմա տարի մե չընցնա՝ քու պոչ էլման դերկըննա: Պոչն ընչի՞ է պետք, քե՛լե, քե՛լե իրթանք մեթ գործին:

